



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղդամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 143Ա

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Ապարան համայնքի կողմից ներկայացված և դրական պատասխան ստացած «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման հարավային կովկասում» ծրագրի շրջանակներում միջհամայնքային «Ապարան և Ծաղկահովիտ համայնքներում սոցիալական ծառայությունների հասանելիություն և ներառականություն» միջհամայնքային դրամաշնորհային ծրագրային պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 92-րդ հոդվածի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2 հոդվածի 11-րդ, 15-րդ մասեր և 16-րդ մասի «ա» ենթակետի պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

- 1.Համաձայնություն տալ համայնքապետարանի արտաբյուջետային հաշիվ բացելու առաջարկին:
- 2.Դիմել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ միջնորդելու ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ նախարարության գործառնական վարչությունում Ապարանի համայնքապետարանի արտաբյուջետային հաշիվ բացելու համար:

Ավագանի՝ (Կողմ – 18),

(Դեմ-0),

(Ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Մխիթարյան Վարդան
Խալաթյան Արթուր
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սաֆարյան Սևակ
Դավթյան Արտյոմ
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա



Համայնքի ղեկավար՝

Կ.Մ.Եղիազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղդամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 144Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի
2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածին համապատասխան.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

- Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
- Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ – 18), (Դեմ–0), (Ձեռնպահ–0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Մխիթարյան Վարդան
Խալաթյան Արթուր
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սաֆարյան Սևակ
Դավթյան Արտյոմ
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավար



Կ.Մ.Եղիազարյան

Հավելված
Ապարան համայնքի ավագանու
24.11.2023թ. №144-Ա որոշման

ԾՐԱԳՐԻ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ

**Ապարան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի
ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող
մասեր**

Բովանդակություն

1. Ներածություն-----	3
2. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները-----	4
3. Ապարան համայնքի 2024-2026թթ. կանխատեսվող եկամուտները և դրանց վերաբերյալ ռիսկերի գնահատումը -----	4
4. Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների-----	5
5. Ապարան համայնքի 2024-2026թթ. կանխատեսվող ծախսերը-----	6
6. Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների-----	6
7. Ապարան համայնքի 2024-2026թթ. կանխատեսվող դեֆիցիտը-----	7

Ներածություն

Ապարան համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Ապարան համայնքի զարգացման հեռանկարի արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում է ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Ապարան համայնքին հաջորդող 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Ապարան համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Ապարան համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Ֆինանսական համահարթեցման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> օրենքներով:

Չարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Ապարան համայնքի 2024-2026թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը կայուն զարգացման սկզբունքի հիման վրա է, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Համայնքի բնակիչների իրավունքների պաշտպանության սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի խնդիրների լուծումը և շրջակա միջավայրի բարելավումը:
5. Աղբահանության արդյունավետ կազմակերպում և կարգավորում:
6. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
7. Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման հետ կապված խնդիրների լուծումը:
8. Միջհամայնքային ճանապարհների, շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
9. Հանգստի գոտիների և խաղահրապարակների ստեղծումը և պահպանումը:
10. Նախակրթական, մշակութային և սպորտային գործունեության շարունակականության ապահովումը:
11. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Ապարան համայնքի 2024-2026թթ. կանխատեսվող եկամուտները և դրանց վերաբերյալ ռիսկերի գնահատումը

Ապարան համայնքի 2024-2026 թվականների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար 1,621,272.2, 1,669,422.2 և 1,718,239.2 հազ. դրամ:

Եկամուտների հավաքման ընթացքում առկա է նաև ռիսկ, դրանց հավաքման թերակատարման մասով: Որը կհանգեցնի համայնքի ծրագրերի իրականացման խոչընդոտմանը: Ռիսկերի մեղմացման մեթոդ է համարվում եկամուտների հավաքագրումը դատարանի հարկադիր կատարմամբ:

Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների

Ապարան համայնքի 2024-2026թթ. եկամուտների կազմում՝ սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 422,227.2, 459,877.27 և 498,694.2 հազ. դրամ, և սույն դինամիկան դիտարկելիս հարկ է արձանագրել, որ աճը կանխատեսվում է 5 տարվա կտրվածքով:

2024-2026թթ. ՄԺԺԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

- Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 95,890.0, 103,915.0 և 112,742.4 հազ. դրամ,
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 162,160.2, 178,376.0 և 196,213.6 հազ. դրամ,
- Գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 42,850.0, 46,524.0 և 47,968.0 հազ. դրամ,
- Վարչական գանձումներ՝ 63,110.0, 69,391.0 և 76,300.0 հազ. դրամ
- Աղբահանության վճարներ՝ 37,541.3, 41,701.0 և 45,871.0 հազ. դրամ

Պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայի մասով 2024թ. համար նախատեսվում է 242,493.2 հազ. դրամով ավելացում, իսկ 2025-2026թթ համար նախատեսվում է մնալ անփոփոխ: Իսկ պետության կողմից տրվող սուբվենցիաները կանխատեսվում է համապատասխանաբար՝ 513,000.0, 564,300.0 և 620,730.0:

Ապարան համայնքի 2024-2026թթ. կանխատեսվող ծախսերը

Ապարան համայնքի 2024-2026թթ. ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 1,387,472.2, 1,437.622.2 և 1,488,591.3 հազ. դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Ընդհանուր ծախսերը ըստ բյուջետային տնտեսագիտական դասակարգման բնույթների կարելի է նկարագրել հետևյալ խմբերով.

- Աշխատանքի վարձատրություն՝ 260,000.0, 270,000.0, և 280,000.0 հազ. դրամ
- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում՝ 94,050.0, 100,200.0, 105,250.0 հազ. դրամ
- Դրամաշնորհներ՝ 692,676.2, 713,871.2, 728,300.0 հազ. դրամ
- Հիմնական միջոցներ՝ 265,000.0, 280,000.0, 295,000.0 հազ. դրամ
- Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ (350,000.0), (400,000.0), (450,000.0) հազ. դրամ

Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների

Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը կայանում է Ապարան համայնքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում ծագած խնդիրների լուծման տեսլականներով, և այն առավել մատչելի ձևով ներկայացված է բյուջետային դասակարգման գործառական խմբերում, մասնավորապես դրանք ըստ բաժինների բաշխված են հետևյալ կերպ.

- Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, համապատասխանաբար՝ 330,271.0, 343,021.0 և 357,271.0 հազ. դրամ
- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 85,574.0, 92,700.0 և 98,300.0 հազ. դրամ
- Տնտեսական հարաբերություններ՝ 350,000.0, 400,000.0 և 450,000.0 հազ. դրամ

- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ 611,571.0, 628,980.0 և 650,320.3 հազ. դրամ
- Հանգիստ, մշակույթ և կրոն՝ 52,865.0, 56,650.0 և 60,500.0 հազ. դրամ
- Կրթություն՝ 276,461.2, 285,741.2 և 290,800.0 հազ. դրամ
- Սոցիալական պաշտպանություն՝ 30,730.0, 31,530.0 և 32,400.0 հազ. դրամ
- Արտադարձրոցական դաստիարակություն՝ 115,559.2, 119,191.2 և 120,000.0 հազ. դրամ
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 274,300.0, 281,800.0 և 289,600.0 հազ. դրամ
- Պահուստային ֆոնդի վարչական մասից ֆոնդային բյուջե հատկացումներ՝ 250,000.0, 260,000.0 և 270,000.0 հազ. դրամ:

Ապարան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի խոշոր, նշանակալից և շարունակական ծախսային ծրագրերից են՝ նոր մարզադպրոցի և մանկապարտեզի կառուցումը՝ համապատասխանաբար՝ 154,471.0, 162,500.0 և 168,000.0 հազ. դրամ, և բակային տարածքների ու միջհամայնքային ճանապարհների ասֆալտպատուման աշխատանքները՝ համապատասխանաբար՝ 350,000.0, 400,000.0 և 450,000.0 հազ. դրամ:

Ապարան համայնքի 2024-2026թթ. կանխատեսվող դեֆիցիտը

2024-2026թթ կանխատեսվող դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում վարչական և ֆոնդային բյուջեների տարեսկզբի ազատ մնացորդը՝ համապատասխանաբար՝ 40,000.0, 50,000.0 և 60,000.0, որը ուղղվում է պարտքային պարտավորությունների մարմանը:

ՀՀ հաշվաքների 2024-2026թթ. միջաժամկետ ծախսերի ծրագրերի վարչական և ֆինոյախ մասերի տարեկան հաշվաքումնեղ ըստ՝ քրցնտային ծախսերի գրոնտուական դասակարգման դասակարգման հրղկաների

[illegible]

[illegible]

[illegible]

1322	14000	17000	17000	17000	17000	21000	250000.0	250000.0	250000.0	250000.0	260000.0	270000.0	270000.0
1323	11750	11750	11750	11750	13550	22,440.0	22,440.0	22,440.0	22,440.0	24,794.0	24,794.0	27,273.0	27,273.0

1. ԹԱՆԻՑԱՆԵՐ

ՄԱՍՆԱԿԱՆԱԿԱՆ ԶԵՆՈՒՄ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղդամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 145Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «ՔԱՂ ՇԻՆ» ՍՊԸ գնահատման հաշվետվությունների հիման վրա համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող 2 միավոր շարժական գույքերը՝ 2 լոտերով, օտարելու դասական աճուրդ վաճառքի միջոցով:
2. Հաստատել գույքերի օտարման մեկնարկային արժեքները՝ համաձայն աղյուսակի:
3. Համայնքապետարանի աշխատակազմին՝ բոլոր հնարավոր միջոցներով ապահովել աճուրդ վաճառքի պատշաճ կազմակերպումը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐ

L N S	Գտնվելու վայրը	ԱՆՎԱՆՈՒՄ	Ծածկագիր	Մեկնարկային գինը դրամ	Հավելած Քայլը /դրամ	Աղյուսակ - 1	
						Նախավճար /դրամ	Կարգավիճակ
1	Նիգավան	Էքսկավատոր Չինվան-90,4	ԷԶ-2008	750.000	37.500	375.000	Անսարք
2	Արագած	ԴՏ-75 բուլդոզեր, Դ-606 մակնիշի	ԴՏ-1983	1.150.000	57.500	575.000	Անսարք

Ավագանի՝

(Կողմ - 18),
Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Մխիթարյան Վարդան
Խալաթյան Արթուր
Կարապետյան Կարեն
Մանուկյան Աղաբեկ
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Սաֆարյան Սևակ
Դավթյան Արտյոմ
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

(Դեմ-0),

(Ձեռնպահ-0)

Համայնքի ղեկավար՝



Կ.Մ.Եղիազարյան